

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**ՈՐՈՇՈՒՄ N 42/12**

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ Ա/Ձ Վարդան Սուքիասյանի դիմում-բողոքը՝

**ՊԱՐԶԵՑ**

**1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները**

Ա/Ձ Վարդան Սուքիասյանը հայտնում է, որ անտեղյակ լինելու պատճառով չի ներկայացրել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը և դրա հետևանքով ավտոմատ կերպով անցել է ավելացված արժեքի հարկման դաշտ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ա/Ձ Վարդան Սուքիասյանը խնդրում է ներողամիտ լինել և թույլ տալ շարունակել գործունեությունն որպես ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ:

**2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

Վարդան Սուքիասյանը՝ որպես անհատ ձեռնարկատեր, հաշվառվել է 01.11.2017թ.:

Ա/Ձ Վարդան Սուքիասյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում չի ներկայացրել 2018թ. ընթացքում ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունը:

Արդյունքում, 2018թ. ընթացքում Ա/Ձ Վարդան Սուքիասյանը համարվում է ավելացված արժեքի հարկ վճարող:

**3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ**

ՀՀ հարկային օրենսգրքի 267-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտներ են համարվում նույն հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված պայմանները բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու կամ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու

դեպքերի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

- 2-րդ մասի համաձայն՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կարող է համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը և անհատ ձեռնարկատերը, որի նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 18 միլիոն դրամը:

Հանձնաժողովը գտնում է, որ վերը նշված իրավանորմով հստակ սահմանված է, որ տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտն ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ կարող է համարվել այն հարկ վճարողը, որը բավարարում է Օրենսգրքի 267-րդ հոդվածի 2-4-րդ մասերով սահմանված պայմաններին և, եթե նրա կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացվել հարկային մարմնի հաստատած ձևով՝ ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն և ընտանեկան ձեռնարկատիրությունում ներգրավված անձանց՝ ընտանիքի անդամ լինելը հիմնավորող համապատասխան փաստաթղթեր:

Քննարկվող դեպքում Ա/2 Վարդան Սուքիասյանի կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացվել 2018թ. ընթացքում ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես՝ 2018թ. ընթացքում նա չի կարող համարվել ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ:

#### 4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

#### ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ Ա/2 Վարդան Սուքիասյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ